«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-252-13.08.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-252-13.08.2019-ՏՏԳԲ-011/0) (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ:

1. Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող փոփոխությունն ընդունելի չէ, քանի որ Հայաստանի անտառները լեռնային են, դասվում են առաջին խմբի անտառների շարքին, ինչը նշանակում է, որ Հայաստանում 2-րդ խմբի անտառներ չկան:

2. Նախագծի 2-րդ հոդվածով ներկայացված առաջարկը ենթադրում է Հայաստանի Հանրապետության անտառների՝ ըստ հիմնական նպատակային նշանակության դասակարգման ընդհանուր վերանայում, որն էլ իր հերթին ենթադրում է ամբողջ անտառային օրենսգրքում մի շարք միմյանց փոխկապակցված հոդվածների վերանայում ևս:

Դեռևս 10-12 տարի առաջ կազմված անտառակառավարման պլաններով Հայաստանի Հանրապետությունում առանձնացվել էին շուրջ 96000 հա արտադրական նշանակության անտառներ, որոնք չեն նույնականացվել սոցիալական նշանակության (սանիտարա-հիգիենիկ, առողջարարական, ռեկրեացիոն) անտառների հետ: Նշված սոցիալական նշանակության անտառները ներառված են հատուկ նշանակության անտառների կատեգորիայում (տե՛ս ՀՀ անտառային օրենսգրքի 12-րդ հոդվածը):

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650 – Լ որոշման 89.1-ին կետի՝ ներկայումս ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից մշակվել և քննարկման փուլում է գտնվում «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը կառավարության քննարկմանը կներկայացվի սահմանված ժամկետում՝ 2019 թվականի նոյեմբերի առաջին տասնօրյակում: Նախարարության մշակած նախագծում ներառվել են հիմնարար դրույթներ, այդ թվում՝ օրենսգրքի 10-րդ և 11-րդ հոդվածների վերանայում, որը դեռևս մասնագիտական լայն շրջանակների հետ քննարկման կարիք ունի:

Նախարարության կողմից մշակվող նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանանալուց հետո կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը:

Ելնելով վերը շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող՝ ՀՀ անտառային օրենսգրքի գործող հոդվածները թողնել անփոփոխ և, ըստ անհրաժեշտության, նախագծի դրույթներին անդրադառնալ առաջիկայում Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի քննարկմանը ներկայացվելիք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնության քննարկումների շրջանակներում: